ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«13» դեկտեմբեր 2024թ. ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 4

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԸ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման Խորհրդի անդամներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավոր սահմանել 100-ը (հարյուր):
2. Սահմանել, որ առավելագույն 100 միավորը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների բաշխվում է հետևյալ համամասնությամբ՝
1) անձնական որակներ՝ 30 միավոր.
2) բարեվարքություն՝ 40 միավոր.
3) պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձ և հմտություններ՝ 30 միավոր:

3. Սահմանել գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Սահմանել գնահատման և միավորների հաշվարկման կարգը՝ համաձայն Հավելված 2-ի:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կարեն Թումանյան (Նախագահ)

Էդգար Արսենյան

Ահարոն Ներսիսյան

Դանիել Իոաննիսյան

Անի Չատինյան

Եփրեմ Կարապետյան (Քարտուղար)

Հավելված 1
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի
2024 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 4 որոշման

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԸ

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուին (այսուհետ՝ Թեկնածու) ներկայացվող պահանջների գնահատումն իրականացվում է սույն հավելվածով սահմանված չափանիշների շրջանակներում:

2. Թեկնածուի անձնական որակները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

1) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, ներառյալ՝

ա. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն,

բ. վերաբերմունքը կոռուպցիայի, դրա դրսևորումների ու հանրային վտանգավորության նկատմամբ.

2) Ղեկավարման և կառավարչական հմտություններ, ներառյալ՝

ա. թիմ ղեկավարելու փորձառություն,

բ. նախաձեռնողականություն,

գ. թիմային աշխատանքի ունակություն,

դ. սեփական զգացմունքները կառավարելու ունակություն ու ինքնատիրապետում,

ե. այլ անձանց և սեփական մասնագիտական կարողությունների ճիշտ գնահատման ու աշխատանքի և պարտականությունների արդար բաժանման կարողություն,

զ. աշխատանքում առաջնահերթությունները սահմանելու կարողություն,

է. անհրաժեշտ իրավիճակներում ինքնուրույն որոշում կայացնելու ունակություն.

3) Հաղորդակցման հմտություններ պաշտոնական և արտապաշտոնական հարաբերություններում, ներառյալ՝

ա. այլ անձանց ունկնդրելու կարողություն,

բ. նոր միջավայրում արագ ինքնադրսևորվելու ունակություն,

գ. այլ անձանց նկատմամբ հարգալիրություն,

դ. անկաշկանդ շփվելու կարողություն,

ե. միջավայրին արագ հարմարվելու ունակություն,

զ. վստահություն ներշնչելը,

է. զսպվածություն.

4) Պատասխանատվության զգացում, ներառյալ՝

ա. ճշտապահություն,

բ. կատարած արարքների հետևանքները կրելու պատրաստակամություն,

գ. սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն,

դ. սեփական սխալներն ու թերություններն ընդունելու և դրանց մասին բարձրաձայնելու ունակություն,

ե. հետևողականություն:

3. Թեկնածուի բարեվարքությունը գնահատվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը՝

1) գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին.

2) նախկինում քրեական կամ կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված չլինելը.

3) շահերի բախման առաջացման ռիսկը և շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողություն.

4) Էթիկայի կանոններին տիրապետելը.

5) վերաբերմունքը քրեական ենթամշակույթի ու դրա բաղադրիչների նկատմամբ և անօրինականության մասին ազդարարելու պատրաստակամություն.

6) զբաղեցրած պաշտոնից դուրս պաշտոնեական դիրքը չգործարկելը, հեղինակության և ազդեցության չափավոր կիրառում.

7) քաղաքական չեզոքություն.

8) քաղաքական և այլ ճնշումներին դիմադրավելու կարողությունը ու ցանկություն:

4. Թեկնածուի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձը և հմտությունները գնահատվում են հետևյալ չափանիշների հիման վրա՝

1) Մասնագիտական փորձառություն, ներառյալ՝

ա. մասնագիտական փորձառության ընդհանուր ժամկետ,

բ. թեկնածուի նախկինում իրականացրած աշխատանքների վերաբերելիությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնին.

2) Ներկայացված իրավական հարցի վերաբերյալ վերլուծության և դիրքորոշման ներկայացման շրջանակներում վերաբերելի՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի, օրենսդրության, ներպետական նախադեպային իրավունքի իմացություն.

3) Ներկայացված իրավական հարցի վերաբերյալ վերլուծություն կատարելու և դիրքորոշում ներկայացնելու կարողությունների և հանպատրաստից կողմնորոշվելու ունակության դրսևորում, ներառյալ՝

ա. տեղեկատվության արագ ու ճիշտ ընկալում,

բ. ստացված տեղեկատվության զտման արդյունքում անհրաժեշտ տվյալների առանձնացում,

գ. տվյալներ համադրելու, համեմատական վերլուծություններ կատարելու կարողություն,

դ. տեղեկատվությունն օբյեկտիվորեն վերլուծելու ու դրա վերաբերյալ մտքերը հստակ շարադրելու միջոցով կարծիք արտահայտելու կարողություն.

ե. սթրեսակայունություն:

5. Սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված 1-ին չափանիշի գնահատման առավելագույն միավորը 6 (վեց) է, իսկ 2-4-րդ չափանիշներից յուրաքանչյուրինը՝ 8 (ութ):

6. Սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը 5 (հինգ) է:

7. Սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը 10 (տասը) է:

Հավելված 2
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի
2024 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 4 որոշման

ԿԱՐԳ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների մասնագիտական որակները գնահատելու նպատակով հարցազրույցի փուլի ընթացքում նախատեսված իրավական հարցի ընտրությունը կատարվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) նախապատրաստած հարցերը թեկնածուի կողմից վիճակահանությամբ ընտրելու միջոցով: Թեկնածուի կողմից ընտրված հարցի և ներկայացված վերլուծության շրջանակներում Խորհրդի անդամներն իրավասու են հարցեր տալ թեկնածուին:

2. Խորհրդի յուրաքանչյուր անդամին տրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա պահանջները և դրանց բովանդակությունը բացահայտող չափանիշները:

3. Խորհրդի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր թեկնածուի՝ նշելով իր նկատառումները գնահատվող չափանիշների վերաբերյալ:

4. Խորհրդի յուրաքանչյուր անդամի գնահատման առավելագույն միավորը սույն որոշման 2-րդ կետով սահմանված միավորն է:

5. Թեկնածուին ներկայացվող պահանջները և դրանց բովանդակությունը բացահայտող չափանիշները գնահատվում են սույն որոշմամբ սահմանված՝ յուրաքանչյուր պահանջի և չափանիշի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում:

6. Խորհրդի յուրաքանչյուր անդամ հարցաթերթիկում նշում է Թեկնածուի կողմից իր գնահատման արդյունքում ստացած միավորների հանրագումարը՝ միաժամանակ նշելով գնահատման ենթակա առանձին պահանջների շրջանակներում Թեկնածուի ստացած միավորների հանրագումարները:

7. Թեկնածուի՝ մրցույթի արդյունքում ստացած միավոր է համարվում Խորհրդի բոլոր անդամների միավորների հանրագումարը:

8. Այն դեպքում, երբ թեկնածուն չի ստացել հնարավոր առավելագույն միավորների հանրագումարի հիսուն տոկոսը կամ բարեվարքության համար սահմանված հնարավոր առավելագույն միավորների հանրագումարի յոթանասունհինգ տոկոսը, ապա նրա թեկնածությունը չի ներառվում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակում:

9. Եթե մրցույթին մասնակցում է մեկ թեկնածու և այդ թեկնածուն չի ներառվում հաղթող ճանաչվածների ցուցակում, ապա մրցույթում հաղթող չի ճանաչվում, և հայտարարվում է նոր մրցույթ: Եթե մրցույթին մասնակցում է մեկից ավելի թեկնածու, բայց հաղթող ճանաչվելու համար անհրաժեշտ պայմաններին բավարարող թեկնածուների թիվը երկուսից պակաս է, ապա մրցույթում հաղթող չի ճանաչվում, և հայտարարվում է նոր մրցույթ:

10. Եթե մրցույթին մասնակցում է երկու կամ ավելի թեկնածու և այդ թեկնածուներից երկուսը կամ երեքն են բավարարում սույն հավելվածի 8-րդ կետում նշված նվազագույն անցողիկ շեմի պայմանները, ապա հենց այդ երկուսը կամ երեքն են ներառվում մրցույթը հաղթողների ցուցակում: Իսկ եթե այդ պայմաններին (նվազագույն միավորներն հավաքելուն) բավարարում է չորս կամ ավելի թեկնածու, ապա մրցույթում հաղթողների ցանկում ներառվում են առավելագույն թվով միավորներ հավաքած երեք թեկնածուները: